# ԼՅՈՒԴՄԻԼԱ ԲԵԼԱՎԵՆԵՑ. ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆՆ ԱՐԴԵՆ ՀԱՍՈՒՆ ԵՒ ՈՒԺԵՂ ՇԱԽՄԱՏԻՍՏ Է

Երեւանցի Կարեն Ասրյանը, որը օրերս տոնեց իր 16 ամյակը, մրցաշարից-մրցաշար ցուցադրում է իր հասուն վարպետությունը: «Կրեմլյան աստղեր» մրցաշարի նախնական փուլում նա հաղթանակի հասավ հայտնի գրոսմայստերներ Ալեքսանդր Բելյավսկու, Եվգենի Սվեշնիկովի, Յուրի Ռազուվաեւի, Գենադի Կուզմինի նկատմամբ, ոչ ոքի ավարտեց պարտիաները Ռաֆայել Վահանյանի, Բորիս Գուլկոյի, Վլադիմիր Եպիշինի հետ: 11 հնարավորից նա վաստակեց 6 միավոր (30-33-րդ տեղեր): «64» եւ «Շախմատը Ռուսաստանում» հանրահայտ երկու ամսագրերի ապրիլյան համարներում տպագրված հոդվածները պատմում են Կասպարովի գավաթի խաղարկությունում Ասրյանի տարած հաղթանակի մասին: Ահա թե ինչ է գրել նրա մասին միջազգային վարպետ Լյուդմիլա Բելավենեցը «Շախմատը Ռուսաստանում» ամսագրում. «Կարեն Ասրյանն արդեն հասուն եւ ուժեղ շախմատիստ է: Հունվարին նա հեշտությամբ գրավեց առաջին տեղը Մոսկվայում անցկացված Տիգրան Պետրոսյանի հուշամրցաշարում, փետրվարին հանդես գալով Սանկտ Պետերբուրգում, լրացրեց միջազգային վարպետի նորման (արդեն երկրորդ անգամ), իսկ այժմ առանց մեծ ճիգերի դարձավ մրցաշարի հաղթող, մոտակա երեք հետապնդողներից առաջ անցնելով մեկ միավորով»:

Մնում է ավելացնել, որ այժմ Ասրյանը մասնակցում է Հենրիկ Գասպարյանի հուշամրցաշարին: Նրան մարզում է հայրը՝ մաթեմատիկոս-ծրագրավորող Արարատ Ասրյանը: Որդու հաջողություններում քիչ դեր չի խաղում նաեւ մայրը՝ թիվ 171 դպրոցի ռուսաց լեզվի եւ գրականության ուսուցչուհին: Առջեւում Երեւանում կայանալիք շախմատի 32-րդ օլիմպիադան է: Ասրյանը Հայաստանի երկրորդ հավաքականի հիմնական թեկնածուներից է:

**ՍՆԱՐՔ**

## Հայերի թիվն աճում է

**Մինչեւ շախմատի համաշխարհային 32-րդ օլիմպիադայի մեկնարկը դեռ բավական ժամանակ կա, սակայն արդեն կազմկոմիտեի հասցեով ստացվել է 18 հայտ: Շախմատային օլիմպիադային մասնակցելու հայտ են ներկայացրել Մոնակոն, Լիբանանը, Կոլումբիան, Նոր Զելանդիան, Բերմուդյան կղզիները, Լյուքսեմբուրգը, Կիպրոսը, Բոտսվանան, Զամբիան, Մակեդոնիան, Թունիսը, Մոլդովան, Սինգապուրը, Չինաստանը, Գերմանիան, ԱՄՆ-ն, Ջերսին:**